818

1. Ախ, որքան եմ Քեզ կարոտել,
Սահման չկա, չափ չկա,
Սիրտս անհամբեր է դարձել,
Ե՞րբ ես գալու, իմ Արքա:

Ախ, երանի՜, ա՜խ, երանի՜
Տեսնեի Քեզ, իմ Հիսուս,
Կարոտ սրտով համբուրեի
Սուրբ ոտքերդ, հոգուս լույս:

2. Ախ, երանի՜ այն աչքերին,
Որ տեսնում են Քեզ հիմա,
Հրեշտակներն են բազում
զորքով
Քեզ ծառայում, Տե՜ր, հիմա:
Ախ, ե՞րբ պիտի ես էլ տեսնեմ
Քո վառ պատկերը լուսո,
Կարոտ սրտիս սերը բերեմ,
Փռեմ ոտքերիդ ներքո:

3. Ես Քեզ ծառայել եմ ուզում
Իմ ողջ սրտով ու հոգով,
Ե՜կ, բնակվիր իմ սրտի մեջ,
Առաջնորդվեմ Քո Հոգով:
Պահի՜ր սիրտս դու անարատ,
Որ արժանի լինեմ Քեզ,
Ես նվազեմ ու փոքրանամ,
Դու իմ մեջ հասակ առնես:

4. Ու երբ որ գաս, Տե՜ր իմ Հիսուս,
Մաքուր սիրտն իմ Քեզ բերեմ,
Քեզ հետ ապրեմ ես երկնքում,
Եվ Քեզնից չբաժանվեմ: